

Կարգ
«Երաժշտական և արվեստի դպրոց» էլեկտրոնային համակարգի միջոցով երեխաների հաշվառման կազմակերպման

1. Նորարար տեխնոլոգիաների կիրառմամբ Երաժշտական և արվեստի դպրոցների կառավարման ճկունությունը, թափանցիկությունը, վերահսկողությունը, ինչպես նաև տրամադրվող ծառայությունների որակը և անվտանգությունը բարձրացնելու, Երևանի քաղաքապետարանի, նրա ենթակայության երաժշտական և արվեստի դպրոցների միջև էլեկտրոնային հաղորդակցության զարգացմանը նպաստելու, հաճախող երեխաների տվյալները էլեկտրոնային գրանցամատյանում պահպանելու և համակարգի հնարավորությունները տեղեկատվության փոխանակման համար օգտագործելու նպատակով՝ Երևան քաղաքի ենթակայության երաժշտական և արվեստի դպրոցներ հաճախող երեխաների հաշվառումը կազմակերպվում է «Արտադպրոցական հաստատություն» էլեկտրոնային համակարգի միջոցով:

2. «Երաժշտական և արվեստի դպրոց» էլեկտրոնային համակարգից /այսուհետ՝ էլեկտրոնային համակարգ/ օգտվում են Երևան քաղաքի ենթակայության երաժշտական և արվեստի դպրոցները՝ որպես «երաժշտական և արվեստի դպրոց» օգտատեր, Երևանի վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի կրթության, մշակույթի և սպորտի բաժինները՝ որպես «Վարչական շրջան» օգտատեր, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և ֆինանսական վարչությունները՝ որպես «Վարչություն» օգտատեր:

3. Համակարգից օգտվողներին տրվում է օգտատեր և գաղտնաբառ ունենալու իրավունք: Անհրաժեշտության դեպքում՝ համակարգից օգտվողը կարող է փոխել իր գաղտնաբառը: Օգտատիրոջ անվանումը փոփոխման ենթակա չէ:

4. Էլեկտրոնային համակարգն իր մեջ ներառում է Երևան քաղաքի ենթակայության բոլոր երաժշտական և արվեստի դպրոցները՝ ըստ վարչական շրջանների:

Յուրաքանչյուր երաժշտական և արվեստի դպրոցի համար լրացվում է հետևյալ տեղեկատվությունը.

- 1/ ընդհանուր տվյալներ.
- 2/ անձնակազմ.
- 3/ բաժիններ և դասարաններ.
- 4/ հաճախող երեխաներ.
- 5/ հաշվետվություններ.

5. Համակարգում «Հաղորդագրություններ» հավելվածի միջոցով Երևանի վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի համապատասխան բաժնի, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի վարչության կողմից իջեցվում են հանձնարարականներ, որոնք ենթակա են պարտադիր կատարման:

6. Երեխային երաժշտական և արվեստի դպրոց ընդունելու համար ծնողը /օրինական ներկայացուցիչը/ ներկայացնում է դիմում՝ երեխայի անձը հաստատող փաստաթղթի առկայության դեպքում:

7. Երեխային ընդունելու մասին տնօրենի հրամանի ընդունման հաջորդ օրը երեխան հաշվառվում է էլեկտրոնային համակարգում:

8. Հաճախող երեխային այլ բաժին տեղափոխումն իրականացվում է երեխայի ծնողի /օրինական ներկայացուցիչի/ դիմումի հիման վրա, երեխային տեղափոխելու մասին տնօրենի հրամանի ընդունման հաջորդ օրը՝ համապատասխան տեղեկատվությունը լրացվում է էլեկտրոնային համակարգում:

9. Երեխային երաժշտական և արվեստի դպրոցից դուրսգրման տնօրենի հրամանի ընդունման հաջորդ օրը երեխայի տվյալների դուրսգրում է ձևակերպվում էլեկտրոնային համակարգում՝ պարտադիր կցելով տնօրենի հրամանի պատճենը: «Ավարտական» դասարան հաճախող երեխաների համար էլեկտրոնային համակարգում կատարվում է տվյալների «Արխիվացում», որը ենթակա է պահպանման՝

«Արխիվային գործի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված ժամկետով:

10. Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներն ապահովում են իրենց վարչական շրջանում գտնվող երաժշտական և արվեստի դպրոցներում էլեկտրոնային համակարգի շահագործումը՝ սույն կարգի համաձայն:

11. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի վարչությունը վերահսկում է երաժշտական և արվեստի դպրոցների էլեկտրոնային համակարգից օգտվողների գործառույթների իրականացումը և պահպանումը:

12. «Արտադպրոցական հաստատություն» էլեկտրոնային համակարգի սպասարկումն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ-ն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 31-ի N1093-Ն որոշմամբ սահմանված դրույթների համաձայն:

Երևանի քաղաքապետարանի
աշխատակազմի քարտուղար

Ս.Մակարյան

